«ՀԱՄԲԱՎԱԲԵՐ ՌՈՒՍԻՈ» ԼՐԱԳԻՐԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Համբավաբեր Ռուսիո» լրագիրը դեմ էր ցարական Ռուսաստանի կազմում ազգային-ազատագրական շարժումներին: Լրագրի խմբագիր Զ.Մսերյանը ոուսամետ հասարակական գործիչ էր և վճռականապես դատապարտում էր ցարիզմի դեմ լեհերի 1863-1864թթ. ապստամբությունը, իսկ հայ ժողովրդի քաղաքական բախտն ու ապագան սերտորեն կապված էր տեսնում այն ամենի հետ, ինչն առնչվում էր Ռուսաստանին: Նա գտնում էր, որ արևելահայությունը, բնավ չպիտի կարեկցի ապստամբ լեհերին, առավել ևս համակրի նրանց, ինչը հայությանը կարող է տանել «դեպի խորխորատ»[1]:

«Համբավաբեր Ռուսիոն» այլ վերաբերմունք է դրսևորում 1868-ական թթ. իտալական ազգային ազատագրական պայքարի նկատմամբ: Այն ուղղված էր ավստրիական կայսրության դեմ, չէր առնչվում ցարական Ռուսաստանի շահերի հետ, ուստի Զ.Մսերյանն այդ պայքարը չի դատապարտում, բայց միաժամանակ ակնհայտորեն չի դրվատում:

Լրագիրը չի լուսաբանում իտալական ժողովրդի 1859-1860թթ. ազգային-ազատագրական պայքարի ընթացքը, որովհետև այդ տարիներին լույս չէր տեսնում: Սակայն նա իտալական թագավորության ստեղծման, Գարիբալդու ազատագրական պայքարի և իտալական միասնական ազգային պետության ստեղծման ժամանակակիցն էր և կարող էր հանգամանորեն անդրադառնալ այս հարցերին, ինչն անում էին ժամանակի հայ պարբերականներից շատերը: «Համբավաբեր Ռուսիոն» այդպես չի վարվում և նախընտրում է ամփոփ մի քանի հոդվածում վերծանել հարցն ամբողջությամբ: Թեև դրանք ծավալուն և ընդհանրական վերլուծություն չեն, այնուամենայնիվ ուշագրավ են հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության համար: «Համբավաբեր Ռուսիոն» վերլուծում է 1815թ. Վիեննայի

[1] «Համբավաբեր Ռուսիո», 1864, թիվ 59, էջ 2:

դաշնագրությունից հետո Եվրոսլայում տիրող քաղաքական վիճակը և 1830թ. և 1848թ. եվրոպական իրադարձություններն անվանում «ազգային բորբոքմունք», որոնք հայտնի «բողոք էին մարդկության ստատուս քվոյի դեմ»[2]:

Լրագիրն իրավացիորեն գրում է, որ 1815թ. Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Իտալիան շարունակեց մնալ մասնատված: Լոմբարդիան և Վենետիկը գտնվում էին ավստրիական կայսրության կազմում. Տոսկանա, Մոդենա, Պարմա դքսություններում իշխում էին Ավստրիայի վասալ արքիդուքսերը, իսկ Նեապոլիտանական նահանգում հաստատվել էին Բուրբոնները:

Լրագրի համոզմամբ Պիեմոնտի թագավորության ճակատագիրը, վճռվեց այն բանից հետո, երբ ռուսաց կայսր Ալեքսանդր I-ի «թախանձանքը հարկադրեց Ավստրիային Սավոյան տոհմը, թողնելու տիրապետող տոհմերի ցուցակի մեջ»[3]:

Թերթը Պիեմոնտի թագավորության կայացման հարցում գերագնահատում է Ալեքսանդր I-ի և Ավստրիայի դերը: Ռուսաստանն իսկապես միակ պետությունն էր, որ Իտալիայի նկատմամբ տարածքային հավակնություններ չուներ և «չափազանց շահագրգռված էր այն բանում, որպեսզի իր համար Իտալիայում ստեղծի ավստրիական արքունիքի հետ կապ չունեցող հզոր և ուժեղ դաշնակից»:[4]

Սակայն Ռուսաստանից բացի Վիեննայի վեհաժողովում Պիեմոնտի օգտին, իր շահերից ելնելով, հանդես եկավ նաև Ֆրանսիան[5]:

Լրագրի գնահատմամբ Իտալիան վեհաժողովից հետո դարձել էր «մի այլանդակ խառնուրդ» որի մեջ չկար «ոչ մի հաստատուն կետ նպատակի»:

1848-1849թթ. «անցքերը» մի փոքր փոփոխեցին Իտալիայի պատկերը. «Ընդհանուր ապստամբություն ծագեցավ Ավստրիո դեմ, որի գլուխ կանգնեցավ Պիեմոնտը, որ հակառակ Ավստրիո ինքնիշխանության, համարձակեցավ մուծանել իր մեջ սահմանադրություն»[6]:

---

[2] Նույն տեղում, 1862, 1 նոյեմբերի, թիվ 34 էջ 4:

[3] Նույն տեղում, 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

[4] См: Дж. Берти, Россия и итальянские государства в период Рисорджименто, ИЛ, 1959, стр. 180.

[5] См: Л.А. Зак, Монархи против народов, М., 1966, стр. 170.

[6] «Համաբավաբեր Ռուսիո», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

Լրագիրն ուշադրությունը բևեռում է այն բանի վրա, որ այդ տարիներին սահմանադրություն բառը վախեցնում էր Հաբսբուրգներին և Պիեմոնտը, դրանով կարծես թե իտալական մյուս պետություններին «հրավիրում էր նոցա թոթափել ինքեանց Ավստրիո լուծը»: Իրականում ոչ թե Պիեմոնտն իտալական պետություններին հրավիրեց պայքարի ընդդեմ Ավստրիայի, այլ գլխավորեց օտարերկրյա ճնշման դեմ ոտքի ելած իտալացիների պայքարը: Եվրոպական ժողովուրդների հեղափոխական և ազգային-ազատագրական պայքարի սկիզբը դրվեց Սիցիլիայում, երբ 1848թ. հունվարին Պալերմոյի բնակչությունն ապստամբեց Բուրբոնների իշխանության դեմ: Նրա արձագանքն արագ տարածվեց Ապենինյան թերակղզում և 1848թ. փետրվար-մարտ ամիսներին ամբողջ Իտալիայով մեկ, բացառությամբ Լոմբարդիայի և Վենետիկի, ձևավորվեցին չափավոր լիբերալների կառավարություններ և ընդունվեցին սահմանադրություններ: Պայքարի ելած Միլանի և Վենետիկի հաղթանակից հետո, մարտի վերջին, իտալական պետությունների ղեկավարները մեկը մյուսի ետևից պատերազմ հայտարարեցին Ավստրիային: Այդ պատերազմն էլ գլխավորեց Պիեմոնտի թագավոր Կարլ Ալբերտը:

Իտալական պետությունների անկախության համար առաջին «արյունահեղ» պատերազմը լրագրի կարծիքով պարտություն կրեց, որովհետև «հարստահարելոց միջում միաբանություն չկար, այլ տերությունք միտք չունեին պաշտպանել հասարակապետությունը: Իտալիան ընկավ և թուլացեալ Պիեմոնտը, ըստ երևույթին, երկար ժամանակ պիտի հրաժարվեր Իտալիան ազատագրելու ջանքեն»[7]:

Սա անհամեմատ ճիշտ գնահատական է, քանի որ Հռոմի պապը պայքարի սկզբներին՝ 1848թ. ապրիլի 29-ին, հավատացյալներին ուղղված պապական կոնդակով հայտարարեց իր զորքերը մարտի դաշտից դուրս բերելու մասին, որոնք շուտով լքեցին Լոմբարդիան: Նրա օրինակին հետևեց նաև Տոսկանայի մեծ դուքսը: Պայքարի հիմնական ծանրությունն ընկավ Պիեմոնտի վրա: Մյուս կողմից, եվրոպական պետությունների մի մասը 1848թ. նույնպես ընդգրկված էին հեղափոխական պայքարի հորձանուտում և պայքարում էին սեփական երկրում հռչակված հանրապետական կարգերի դեմ:

---

[7] Նույն տեղում:

«Համբավաբեր Ռուսիոն» այնուհետև պատմում է, որ Ֆրանսիան օգտվելով Ավստրիայի ժամանակավոր թուլությունից, որն այդ պահին զբաղված էր Վենետիկի հետ պատերազմելով, հայտնվեց Հռոմի առաջ, այնտեղից դուրս մղեց հանրապետականներին ու վերականգնեց նրանց կողմից արտաքսված Պիոս IX-ի աշխարհիկ իշխանությունը:

Լրագիրն օբյեկտիվ չէ՝ գրելով, թե Հռոմի «հանրապետականքն արտաքսեցին զՊապը»: Իրականում Պիոս IX-ի ժողովրդական ելույթներից ահաբեկված 1848թ. նոյեմբերի 24-ին, անգամ իր կարդինալներից գաղտնի, Հռոմից փախավ նեապոլիտանական Գաետա ամրոցը[8], իսկ Հռոմում հանրապետություն հռչակվեց նրա փախուստից հետո՝ 1849թ. փետրվարի 8-ին[9]:

Լրագիրն իրավացի է, որ Պիոս IX-ի իշխանության վերականգնումից հետո Հռոմում հաստատվեց Ֆրանսիայի ազդեցությունը: Նա թեև չի պարզաբանում իր միտքը, սակայն հասկանալի է, որ նկատի ունի ֆրանսիական կայազորի առկայությունը Հռոմում:

«Համբավաբեր Ռուսիոն» ճիշտ է նկատում, որ Ղրիմի պատերազմին Պիեմոնտի մասնակցությունը մերձեցրեց նրան Ֆրանսիայի հետ և Պիեմոնտը մասնակցելով պատերազմի արդյունքները քննարկող Փարիզի 1856թ. վեհաժողովին, եվրոպական պետություններին ներկայացրեց Իտալիայի «տառապակրության պատկերը Ավստրիո լուծի տակ», սակայն հաջողություն չունեցավ: Դրա փոխարեն Ավստրիան զգաստացավ և Պիեմոնտի առկայությունն իր սահմանադրությամբ հանդերձ համարեց վտանգավոր իտալական մյուս պետությունների շարքում, որոնք «հպատակում էին նորա միահեծան իշխանության, վասն որո մտածեց զինու զորությամբ ոչնչացնել նրան»[10]:

«Համբավաբերը» չի հիշատակում Պիեմոնտի կառավարության ղեկավար Կավուրին, որը վեհաժողովում թեպետ չհասավ իր նպատակին և Պարմայի ու Մոդենայի դքսությունները չմիացան Պիեմոնտին՝ որպես պատերազմում նրա մասնակցության փոխհատուցում, այնուամենայնիվ մեծ պետությունների ուշադրությունը հրավիրեց իտալական խնդրի վրա, բարձրացրեց Պիեմոնտի

---

[8] История Италии. Под. ред. К.Ф. Мизиано, т.2, М., 1970, стр. 192.
[9] Там же, стр. 198.
[10] «Համբավաբեր Ռուսիոն», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

հեղինակությունը և նպաստեց ազգային-ազատագրական պայքարի ուժեղացմանը[11]:

«Համբավաբեր Ռուսիոն» հստակ գիտեր իտալական պետությունների նկատմամբ Ավստրիայի «միահեծան իշխանության» մասին, սակայն այդ կապակցությամբ դիրքորոշում չի դրսևորում և նախընտրում է լռել: Լրագիրն անգամ չի խորանում մի կողմից՝ Ֆրանսիայի և Պիեմոնտի և մյուս կողմից Ավստրիայի միջև ծագած պատերազմի նախապատմության, ինչպես նաև Ֆրանսիայի հետապնդած նպատակի մեջ: Նա բավարարվում է փաստելով, որ 1859թ. ապրիլի 26-ին Պիեմոնտին վերջնագիր ներկայացնելուց հետո ավստրիական զորքերը մտան նրա տարածքը: Ըստ լրագրի, ինչպիսի արագությամբ ավստրիական զորքերը մոտեցան Թուրինին, նույնպիսի արագությամբ ֆրանսիական զորքերը Պիեմոնտին օգնության եկան և ավստրիացիներին ետ մղեցին Մինչիո գետի մյուս կողմը: Մինչ Եվրոպան սպասում էր Ավստրիայի վերջնական կործանմանը, Նապոլեոն III-ը «հանկարծ» հաշտություն կնքեց և Պիեմոնտը ստացավ միայն Լոմբարդիան[12]:

Լրագիրը մանրամասն չի պատմում իտալացիների ազատագրական պայքարի մասին և անճշտություն է թույլ տալիս՝ ասելով թե ֆրանսիական զորքերն արագորեն մոտեցան Թուրինին և պիեմոնտցիներին փրկեց Ֆրանսիան: Իրականում հակառակորդների միջև մի քանի մանր ընդհարումներից հետո առաջին լուրջ ճակատամարտը տեղի ունեցավ սահմանաբաժան Տիչինո գետից ոչ հեռու, Մոնտեբելլո վայրում, որը գտնվում էր Պիեմոնտի տարածքում: Ֆրանս-սարդինական համատեղ ուժերը (116 հազար ֆրանսիացի և 63 հազար պիեմոնտցի) ետ մղեցին ավստրիացիների գրոհը, իսկ հետագա ճակատամարտերը տեղի ունեցան Ավստրիայի տիրապետության տակ գտնվող Լոմբարդիայում[13]:

«Համբավաբեր Ռուսիոն» 1859թ. սկսված պատերազմը համարում է «Իտալիայի վերածնության սկիզբը»՝ նկատի ունենալով Տոսկանայի, Պարմայի և Մոդենայի դքսությունների որոշումը Պիեմոնտի հետ միանալու մասին: Ուշագրավն այն է, որ լրագիրը դա համարում է նրանց կողմից ավստրիական

---

[11] См. Дж. Канделоро. История современной Италии, том 4, М., 1966, стр. 208

[12] «Համբավաբեր Ռուսիո», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

[13] История Италии, том 2, стр. 222.

«լուծը» թոթափել: Թեպետ Վիլլաֆրանկայի դաշնագրությունը չընդունեց նրանց միավորումը. սակայն լրագրի կարծիքով մի «երևելի կանոն» սահմանեց. որով ոչ մի տերություն իրավունք չուներ խառնվել Իտալիայի ներքին գործերի մեջ և առաջվա իշխող տոհմերը չպետք է բազմեին «իրենց աթոռների վրա» զենքի ուժով «Եվ այս նշան էր թերակղզու ազատությանը»[14]:

Լրագիրը ճիշտ չի մեկնաբանում 1859թ. հուլիսի 11-ին Վիլլաֆրանկայում կնքված զինադադարի պայմանները, որը հետագայում հաստատվեց Ցյուրիխի հաշտության պայմանագրով: Նրանով Ապենինյան թերակղզին ազատություն ձեռք չբերեց: Իտալիան մնաց մասնատված: Ավստրիան Լոմբարդիան զիջեց Ֆրանսիային, որն իր հերթին այն «նվիրեց» Պիեմոնտին: Վենետիկը մնաց Ավստրիայի գերիշխանության տակ, իսկ Տոսկանայի և Մոդենայի դքսերը պետք է վերադառնային իրենց գահերին: Ֆրանսիայի և Ավստրիայի կայսրերը պարտավորվեցին օժանդակել Հռոմի պապի նախագահությամբ իտալական համադաշնության ստեղծմանը:[15]

«Համբավաբեր Ռուսիոն» այս գաղափարն անվանում է «անկատարելի միտք... զոր Իտալիո ժողովուրդը իհարկե չէին կարող ընդունել»: Ընդհակառակը, շարունակում է լրագիրը, Ռոմանիան և Մարխիաները հետևեցին դքսությունների օրինակին և հայտարարեցին Պիեմոնտի հետ միանալու մասին, իսկ անցկացված հանրաքվեն ամենքը հարգեցին և «Եվրոպային մնաց միայն ճանաչել եղելությունը»[16]:

Այս հարցում լրագիրն իրավացի է: Իտալական ժողովուրդը, որ 1847թ. Հռոմի պապի հետ մեծ հույսեր էր կապում Իտալիան միավորելու հարցում, Պիոս IX-ի կողմից հռոմեական զորքերը Լոմբարդիայից ետ կանչելուց և պապի Հռոմից փախչելուց հետո կորցրեց նրա նկատմամբ հավատն ու վստահությունը և դեմ էր Հռոմի պապի գլխավորությամբ համադաշնության ստեղծմանը: Վիլլաֆրանկայի խայտառակ զինադադարի պայմանները իտալական ժողովուրդը հրաժարվեց ճանաչել ու շարունակեց պայքարը երկրի միավորման համար:

Կենտրոնական Իտալիայում 1860թ. մարտին անցկացված հանրաքվեն

---

[14] «Համբավաբեր Ռուսիո», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

[15] История Италии, том 2, стр. 223.

[16] «Համբավաբեր Ռուսիո», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

կողմ արտահայտվեց դքսությունները Պիեմոնտին միանալու հարցում:

Իտալական պետությունների միավորման համար հզոր խթան հանդիսացավ Գարիբալդու կամավորների արշավանքը նախ՝ Սիցիլիա, իսկ այնուհետև՝ Նեապոլ:

Պարբերականն իրավացիորեն գրում է, որ Նեապոլում թագավորող Բուրբոնների դեմ իտալական ժողովուրդը քանիցս ոտքի էր ելել, բայց ամեն անգամ զենքի ուժով ճնշվել: Սիցիլիացիները դեմ էին Նեապոլի թագավորի «ինքնակամ կառավարությանը», ապստամբություն էին բարձրացնում նրա դեմ, բայց հաջողություն չէին ունենում: Եվ ահա Գարիբալդին իր կամավորներով Ջենովայից գնաց Սիցիլիա:

«Համբավաբեր Ռուսիոն» Գարիբալդու մասին գրում է զուսպ տոնով, առանց համակրանքի որևէ նշույլի, չի դրվատում նրա գլխավորած ազատագրական պայքարը և ոչ էլ հանդիմանում է: Լրագիրը Գարիբալդուն անվանում է «Պիեմոնտյան զորապետ..., որ հռչակված էր իր քաջագործությամբ», ինչպես 1848-1849թթ., այնպես էլ 1859թ. պատերազմներում: Լրագրի խմբագիր Ձ.Մսերյանը անտարակույս լավ գիտեր, որ այդ տարիներին իտալական ժողովուրդը սոսկ պատերազմ չէր մղում, այլ պայքարում էր թոթափել ավստրիական տիրապետությունը:

Նա մի քանի անգամ շեշտում է այդ բանը, բայց միևնույնն է, ազատագրական պայքարի փոխարեն գործածում էր պատերազմ բառը: Լրագիրը չի ուրանում Գարիբալդու հաջողությունները Սիցիլիայում, որտեղ նա ամենուրեք «հարված տալով» Նեապոլի թագավոր Ֆրանցիսկ II-ի «բազմաթիվ զորացը» հարկադրեց նրան «համաձայնիլ ամոթալի դաշնագրության՝ կղզին դատարկելու մասին»: Դրանից հետո Սիցիլիան հայտարարեց իտալական թագավորության հետ միանալու մասին «Վիկտոր Էմմանուելի գայիսոնի տակ»:[17]

Թերթը գրում է ոչ թե Գարիբալդու կամավորների կողմից թագավորական զորքերը ջախջախելու, այլ ընդամենը «հարված տալու» մասին: Նա չի պարզաբանում իր միտքը, թե ինչ ասել է «ամոթալի դաշնագրություն»: Ամենայն հավանականությամբ թերթը նկատի ունի թագավորական զորքերի կողմից Սիցիլիան լքելը, որով Բուրբոնների իշխանությունը կղզում փաստացի տապալ

---

[17] Նույն տեղում:

վեց: Սակայն, եթե դա «ամոթալի» էր թագավորի համար, ապա պատվաբեր էր Գարիբալդու և ազատության համար պայքարի ելած Սիցիլիայի կամավորների համար, որոնք կռվում էին քանակական առումով իրենց գերազանցող զորքի դեմ: Այս բանը «Համբավաբերը» անտեսում է, որի համար առաջնայինը կատարվածի մասին պատմելն էր և ոչ թե դիրքորոշում ցույց տալը: Պատահական չէ, որ լրագիրը բնութագրող որևէ խոսք չի գրում Վիկտոր Էմմանուելի մասին և՝ առհասարակ անտեսում է Կավուրին, որն իր կյանքի գլխավոր նպատակը համարում էր Իտալիան միավորված տեսնելը:

«Համբավաբերն» այնուհետև պատմում է, որ Գարիբալդին Սիցիլիայով «չբավականացավ», անցավ Կալաբրիա և «ցիրուցան» անելով թագավորական զորքերը, մտավ Նեապոլ: Այնտեղ անցկացված հանրաքվեն որոշեց միանալ իտալական թագավորությանը: Լրագիրն այս իրադարձությունների մասին գրում է. «Այս ամենայն համաշխարհական պատմության մեջ չեղած անցքերը՝ Եվրոպայեն ճանաչուեցան իբրև կատարված գործեր»:

Լրագիրը նկատի ունի 1861թ. մարտին կազմավորված իտալական թագավորության ճանաչումը եվրոպական մի խումբ տերությունների կողմից: Դրանով Իտալիայի միավորումը չավարտվեց, քանի որ թագավորությանը մնաց չիմացված Պապական մարզը:

«Համբավաբերն» իրավացիորեն գրում է, որ Հռոմի պապը «համառությամբ պահպանում էր նորա միջում իր աշխարհական իշխանությունը, երբ որ բոլոր Իտալիան պահանջում էր այդ քաղաքը որպես իր բնիկ և պատմական մայրաքաղաք»:[18]

Լրագիրը քաջատեղյակ էր 1849թ. ի վեր Հռոմում գտնվող ֆրանսիական կայազորի մասին, որը պահպանում էր Պիոս IX-ի իշխանությունը: Նրա համոզմամբ այս կայազորի դեմ ցանկացած գործողություն կդիտվեր որպես Ֆրանսիայի վրա հարձակում, իսկ իտալացիներն այդքան ուժ չունեին, որպեսզի Ֆրանսիայի դեմ պատերազմեին հանուն Հռոմի: Այդ իսկ պատճառով եվրոպական երկրների հավանությունը ստանալու ջանքեր թափվեցին, որպեսզի Հռոմի պապին համոզեն հրաժարվել իր իշխանությունից կամ Ֆրանսիան դադարի նրան պաշտպանելուց: Լրագիրը ճիշտ չի մեկնաբանում այս

[18] Նույն տեղում:

հարցը, քանզի սկզբնական շրջանում Նապոլեոն III-ը փորձում էր համոզել Պիոս IX-ին հրաժարվել իր աշխարհիկ իշխանությունից և հանդիպում էր նրա վճռական «non possumus»-ին («չենք կարող»)[19]: Դրանից հետո միայն Գարիբալդին, համոզվելով, որ Պիոս IX-ը կամովին չի զիջում Հռոմը, 1862թ. հունիսին իր համախոհներով նորից գնաց Սիցիլիա և արշավանք ձեռնարկեց Հռոմի վրա: Տեղեկանալով այս մասին Նապոլեոն III-ը հայտարարեց, որ Ֆրանսիան պաշտպանելու է Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը և թույլ չի տա Հռոմի միացումը Իտալիային: Վիկտոր Էմմանուելը Գարիբալդու արշավանքը անվանեց «խռովություն» և սպառնաց խստորեն պատժել բոլոր նրանց, ովքեր կմիանան Գարիբալդուն:[20]

Սակայն այդ սպառնալիքը չկանգնեցրեց Գարիբալդուն, որը «Համբավաբերի» դիտարկմամբ մտքում դրել էր «մեծ գործ» կատարել ու հույս ուներ, թե ամբողջ Իտալիան կմիանա իր հետ Հռոմի վրա արշավելիս: Դա տեղի չունեցավ, որովհետև թագավորական զորքերի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ նա պարտություն կրեց, վիրավորվեց և գերեվարվելով փակվեց Վարինիանո ամրոցում: Միայն հոկտեմբերի 5-ին Գարիբալդին ներում ստացավ:

«Համբավաբեր Ռուսիոն» ճշմարտացիորեն նկարագրելով Գարիբալդու արշավանքի անհաջողությունը, չի անդրադառնում այն իրողությանը, որ իտալական ժողովրդական հերոսին Վիկտոր Էմմանուելը հարկադրված էր ներում շնորհել՝ տեղի տալով հասարակական կարծիքին:

Հետագայում Վիկտոր Էմմանուելը հաղթական ավարտի հասցրեց Իտալիայի վերջնական միավորումը: Նա 1866թ. Պրուսիայի հետ դաշնակցած պատերազմեց Ավստրիայի դեմ ու Իտալիային միացրեց Վենետիկի նահանգը, իսկ 1870թ. սկսված Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ ֆրանսիական կայազորը, դուրս եկավ Հռոմից, որը հոկտեմբերի 2-ի հանրաքվեի արդյունքով միացավ Իտալիային: 1871թ. Իտալիայի մայրաքաղաքը Ֆլորենցիայից տեղափոխվեց Հռոմ, որով ավարտվեց իտալական ազգային պետության ստեղծումը: Այս մասին «Համբավաբեր Ռուսիոն» պատմել չկարողացավ, քանի որ 1864թ. դադարեց լույս տեսնել:

---

[19] История XIX века. Пор. ред. Лависса и Рамбо. том 5, М., 1938, стр 287-288.
[20] История Италии, том 2, стр. 245.